

Արիստոտելի ուսմունքի վերստին տարածմամբ: Այս առնչությամբ, մեծ աշխատանք կը տանի դոմինիկեան միաբան փիլիսոփայ-աստուածաբան իտալացի **Թոմաս Աքուինացին**, որ կը փորձէ սերտ կապ հաստատել՝ արիստոտելականութեան եւ քրիստոնէական ուսմունքի միջեւ: Հետագային, ուշ դպրական ժամանակաշրջանին, այս ուղղութեան պիտի հակադրուէր այլ ուղղութիւն մը, գլխաւորութեամբ սկոտլանդացի ֆրանցիսկեան միաբան փիլիսոփայ-աստուածաբան **Յովհաննէս-Ջոն Դունս Սկոտի**: Այս ժամանակաշրջանին, յիշատակութեան արժանի է նաեւ Միջնադարու քրիստոնէական *խորհրդապաշտութիւնը* (Mysticism), որ իր կատարելութեան կը հասնի գերման դոմինիկեան միաբան **Մայստեր Էքհարտի** (Meister Eckhart, 1260 – 1328 թ.) օրով:

- **Ուշ դպրական** ժամանակաշրջանին (14–15-րդ դար), կը քննադատուին Հին Դարու բնագանցական դրութիւնները եւ կը յայտնուի վիճայարոյց նոր ուղի մը, որ կը կոչուի *անուանականութիւն* (Nominalism, կազմուած լատիներէն nomen = անուն եզրէն): Սկոտլանդացի ֆրանցիսկեան միաբան **Դունս Սկոտի** կողքին, այս ժամանակաշրջանի նշանաւոր փիլիսոփայ-աստուածաբանները կը հանդիսանան՝ անգլիացի ֆրանցիսկեան միաբան **Ուիլիամ Օկկամի** (William of Ockham, 1287 – 1347 թ.) եւ գերման կաթոլիկ կարտինալ **Նիկոլայոս Կուզանացի** (Nikolaus Cusanus, 1401 – 1464 թ.): Ստորեւ, վերոյիշեալ Դպրական երեք ժամանակաշրջաններու ամենանշանաւոր փիլիսոփայ-աստուածաբանները եւ իրենց ուսմունքն ու բարոյագիտութեան մասին յայտնած գաղափարները՝ ժամանակագրական կարգով.-

➤ Անսելմ Քանտրբերցի

Անսելմ Քանտրբերցի (Anselm of Canterbury, 1033 – 1109 թ.), ծնած է՝ Անգլիա: 11-րդ դարու հռչակաւոր աստուածաբանը, հեղինակն է Աստուծոյ գոյութեան Էաբանական-գոյաբանական (ontological) ապացոյցին: Անսելմի համաձայն, մարդկային հոգին Աստուծոյ պատկերին նման է եւ ունի երեք կարողութիւններ՝ յիշողութիւն, իմացաբանութիւն եւ սեր:

Դպրութեան ուսմունքի հայր նկատուող Անսելմ, 1494 թուականին, Կաթոլիկ Եկեղեցւոյ կողմէ կը դասուի սրբութեան կարգ: Իր գլխաւոր փիլիսոփայական-աստուածաբանական երկը կը կոչուի «*Պրոսլոգիոն*» (1078 թ., „Proslogion“):

➤ Պետրոս Աբելարդոս

Պետրոս Աբելարդոս կամ Պիեռ Աբելար (Petrus Abaelardus կամ Pierre Abélard, 1079 – 1142 թ.), ծնած է՝ Ֆրանսա: Ինքնակենսագրական երկի մը մէջ, կը նկարագրէ իր տառապալի կեանքը: Ան աշխոյժ մասնակցութիւն կը բերէ *համայնականներու* վեճին (Problem of Universals), ինչպէս նաեւ կը ջատագովէ բանականութեան կարեւորութիւնը եւ դպրական ուսման իւրայատուկ եղանակը, հաւասարապէս, թէ՛ փիլիսոփայական եւ թէ՛ աստուածաբանական